

ՎԼԱՍ ԿԱՌՆԻԱՑԻ

ԿԱՄ

ԱՆՁԳԱՄ ՍՊԱՆՈՂ ՄԱՆԿԱՆՑ

(Տես Հար. ԽԸ. էջ 373)

Վեկետիկեան պատմական վեպ վեշտասաներորդ դարուն:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վայսատուն յառանգն



ՅԱՐՈՐԴ առաւօտը Վիկտորինէի տունն ուրախութեան տօն կը կատարէր: Պէքո իւր լաւագոյն զգեստներն հագուած՝ զբաղած էր անուակէն դուրս հանելու այն առարկաներն՝ որք զտղան ստուգիւ ճանչելու պիտի ծառայէին: որովհետեւ որոշեր էին նոյն օրը զինքը Իարմանոցէն հանել:

Ինչք՝ մայրը — համբերով ամեն մէկ ժամը՝ որ կը զրկէր զինքը գրկաց մէջ Կգուելու իւր անմեղուկը, որոյ պատկերը մայրենի սիրով իւր օրտին մէջ գրոշմուած կը տեսնէր — փոքրիկ զգեստ մը կը պատրաստէր՝ հագուեցընելու զայն իւր մանկան, դեռ զինքը Իարմանոցէն չընդունած:

Թշուա՞ն մայր. ահաւոր և ամենադառն պատրանք մը յուսոյ կը սպասէր իրեն. և իբր Թէ այն բաւական չլինէր՝ նոյն վայրկենին վրայ կը հասնէր ուրիշ սարսափելի ժախորդութիւն մ՝ալ:

Նորա ուրախութիւնն փայլակէ մը չըզայուն նմանեցաւ, որ կարճ ժամանակի մէջ յուսոյ նշով մը լուսաւորեց այն եղիկէւոյն երջանիկ երազը, և իսկոյն յանկարծակի աներևոյթ եղաւ. միայն ցաւալի և հեռաւոր յիշատակ մը Թողւով իւր հետոյ այն եղիկէւոյն մտաց մէջ:

Մինչդեռ Պէքո կարևոր եզածներն անկելով և փոքրիկ զգեստին կապոցը ձեռքը դուրս ելնելու վրայ էր, յանկարծ գուռը զարնուեցաւ և գատարանին պաշտանեայ մը ներկայացաւ, հարցընելով Թէ արգեօք տունն էր Վիկտորինէ Տօլֆին:

— Ահաւասիկ ինքն, պատասխանեց Պէքո, որ գուռը բացեր էր, ձեռքովը յուշքս նետով զՎիկտորինէ:— Ես Պէքո Տուժմ իւր եղբորբարձին եմ, ե՞նձե՞ բան մ՝անիկա ըսեւ լիք՝ համարձակ կերպով կրտսա ըսել:

— Ամենաբառն պաշտօն մը պիտի կատարեմ, տիկին, ըսաւ պաշտանեայն ներս մտնելով և դէպ ՚ի Վիկտորինէ գառնալով:

— Ի՞նչ կ'ուզէք ըսել, տէր. պատասխանեց Վիկտորինէ բուշորովին այլալայած:

— Ահաւասիկ. մօրեղբայրդ մեռած ըլլալով...

— Մեռած, վրայ բերաւ կնիկն:

— Ե՛րբ, հարցուց Պէքո:

— Երէկ իրիկուն. և որովհետեւ իրեն Թողւցած կտակէն յայտնի կ'երևի...

— Որ հօրեղբորորդին իրաւացի և մէկհատիկ ժառանգն է... փուլթաց վրայ բերելու նաւազարն:

— Բարձրովն հակառակը, պատասխանեց պաշտօնեայն. Վիկտորինէի համար սահմանուած է անգամ մը միայն արուելիք բոլոր բարբոք քսան ոսկի:

— Քսան ոսկի միայն, գոչեց Վիկտորինէ: Ծաղու և սպառութեան զգացմամբ լեցուած:

— Ծանորդի հօրեղբայր, անիծած վաշխառու: Ո՛վ է ուրեմն իրեն թողուցած հարուստ ժառանգութեան տերն, հարցուց նաևա՛վարն առ պաշտօնեայն:

— Ժառանգն Անտոն Սկրէմին, որդի Ճէլթրուա Սկրէմինի, որ մօրեղբորդ աղակինն էր, իսկ հիմա խնամակալ է պզտիկ աղուն, ուստի և տեր է ամէն շարժուն և անշարժ ստացուածոց իւր սրբուոյն:

— Ախ, կը գուշակէի, կը գուշակէի, ըսաւ հեծկլտալով Վիկտորինէ. այն անզգամը ուզածին պէս իմ գլխուս իւր խաղը խաղաց, և օգուտ քաղեց մօրեղբորս սկարութենէն՝ յափրջաակելով ինծմէ ինչ որ ըստ իրաւանց միայն ինծի կը պատկանէր:

— Արդ ամենևին բան մը չեմ գիտեր, տիկին, պատասխանեց, պաշտօնեայն. միայն պէտք է զուրցեմ՝ քեզի որ մօրեղբայրդ մեռնելէն առաջ յաւելուած մ'ըրաւ իր կըստակին:

Լեւեք այդ յանկուածն, ըսաւ Պէրբո, ձեռքերը դէպ 'ի թիկունքն ամփոփելով և գլուխը տատանելով, և շննալով սանձել բարկութեան բուռն յորձանքը և արեան եռացումն:

— Յաւելուածն այս է, որ երբ Անտոն Սկրիմին մեռնի, դռն՝ Վիկտորինէ Տօլֆին՝ ամբողջ ստացուածոցը ժառանգ պիտի լինիս:

— Անզգամն, յետ զիս անժառանգ թողուաւ, նաև վրաս կը խնայայ:

— Մի լքանիր, սիրելի, պատասխանեց Պէրբո. հազարումէի գիպուածք կրնան հանգիպել. Հարուստ ժառանգութենէն զրկուած ժամանակդ՝ դէթ աղքատ միտ. թարութիւն յուսոյ կը մնայ քեզի:

— Հանգուցեալ մօրեղբորդ քեզի ձգած քսան ոսկիներն յանձնած ժամանակս, տիկին, ուրիշ գառն պաշտօն մ'ալ պարտական եմ կատարելու, աւելցուց պաշտօնեայն առանց այլայլելու:

— Անիծածն, ըսաւ ինքիբերն Պէրբո. այս մարդս նոյն իսկ գուժաբեր ագուան է:

— Կատարեցեք, տէր, պատասխանեց Վիկտորինէ. անշուշտ եմ որ խնամակալ հնօջ ուրիշ մէկ զրկանաց պահանջումն պիտի լինի:

— Գուք պէտք է շուտով այս անէս գուրս ելնէք. այս է Ճէլթրուա տիկնոջ հրամանն, որ եկած է վարը նաւակով, այս սանս տիրապետելու:

— Կրողը տանի. բացաբանչեց Պէրբո պաշտօնեին հրատարակութիւնը լսելով: Այսպէս ուրեմն մէկ վայրկեանի մէջ խեղճ մարդիկը շան մը պէս գուրս կը վաճառուին փողոցի վրայ: Ո՛ւր է մարդկութիւն, ո՛ւր է սրբաբարութիւն, ո՛ր օրէնքն այսպիսի եղեւնաւ որ գործ մը կը թողու անպատուհաս: Զուրցեց Ճէլթրուա տիկնոջ որ սան զուղեւորէն վեր ելնելու շնանգգնի, որովհետև չեմ կրնար երաշխաւորել որ իր սաքերով կարենայ վար իջնել. այս խօսքերս աւելցուց Պէրբո ծանր և սպառնալից ձայնով:

— Հանգարտե Պէրբո, հանգարտե կ'աղաչեմ. ես արդէն բաւական ժամանակ էի վեր գժտախառութեանց վարժեր եմ՝ ըսաւ Վիկտորինէ, որ ինքզինքը բռնել կը ըսնար. — կը ցաւիմ որ հիւանդ եմ, և այսպէս երկու ոտքի վրայ...

— Այս է հրամանը, տիկին, պատասխանեց արդարաւորին ըսուածին ներկայացուցիչն, և ես միայն զայն կատարելու պարտաւորութիւնն ունիմ: Ամէն բանի գարման

ահա հոս կու գայ տիկինն. կրնաք իրեն գիմել որ ժամանակն երկարած գէ. ես ձեզի օգնել չեմ կրնար:

Պէրքո սպառնալոյ կերպով գէպի գուռը մտեցեր էր, և անշուշտ անխոհեմ գործ մը պիտի կատարէր, ի թէ իւր ազգականին Վիկտորինէի շարժմանը մը զինքը ետ չկէցընէր. ուստի ըսուական համարեցաւ պիտաները կրճտելով ետ քաշուիլ, նման գազանի մը որ զինքը սանձող խաղացողին առջև գլուխը կը խոնարհեցընէ և կը խեղդէ իւր կատաղութեան քնական բերումը:

— Ի՞նչպէս ալ ներանալի են այս սանդուղներն, ինչպիսի՞ վատառողջ գարշահոտ առութիւն կը բուրէ այս տեղս, ըսաւ շէլթրուա, որ քրոջի մը պէս շունչ աննկշով առով առաջ կու գար այն վայրկեանն, իրեն հետ ունենալով եօթը ութը տարեկան աղայ մը, որոյ գէմբին վրայ յայտնի կերպով կը տեսնուէին քնածին նշաններ խնչա գարութեան և շարքառութեան:

— Հրամեցէք նստել, տիկին, ըսաւ Վիկտորինէ, ա՛թո՛ւ մը սալով. մի միայն գործածելի աթոռն է՝ որ ամբողջ տան մէջ կը գտնուի:

— Բան մը չէ. որդիս ոտքի վրայ կրնայ կեննալ, պատասխանեց շէլթրուա, նստելու պատրաստուելով:

— Բայց ես հոգնած եմ, մայր իմ. դուն կրնաս ոտքի վրայ մնալ, և թողուլ որ ես նստիմ: — Ըսելն ու գործելը մէկ ընելով՝ աղան աթոռին վրայ ցատկեց, Թողով մայրը ոտքի վրայ. որ փոխանակ ուղղելու զողան՝ սկսաւ խնամա տրուել աշխոյժ կերպով աթոռին վրայ ցատկելուն և իրեն տեղը նստելուն համար:

— Ո՛հ, ի՞նչ գէղեցիկ կրթութիւն, ըսաւ ինքնիրեն Պէրքո:
— Եսաւ կը ցաւիմ. տիկին, ըսաւ Վիկտորինէ խեղճ ճորտգործ մահուան վրայ:

— Հիւանդութեան ատեն և ոչ իսկ հոգ ըրիր գալու զինքը տեսնելու:

— Ի՞նչպէս. ոչ մէկ անգամ միայն, այլ քսան անգամ. և միշտ սենեկին մուտքն ինձ արգիւնեցաւ: Այսօր գէշ է, կ'ըսէին, վաղը՝ չէր ուղեր կամ չէր կրնար ընդունել զիս. վերջապէս քանի անգամ որ ներկայացայ՝ չկրցայ խեղճ հանգուցելոյն հետ տեսնուելու ուրախութիւնն ունենալ:

— Կարելի բան չէ, կարելի չէ, վրայ բերաւ աներեսաբար շէլթրուա, ստելով և գիտելով իւր ըսածին սառութիւնը:— Երազիր ես գալու զինքը տեսնելու. ես երբեք զքեզ չտեսայ, մասուանդ թէ ծառաներն ինձի ըսին թէ քնաւ կեցած չես ճորտգործ վրայ տեղեկութիւն հարցընելու:

— Ի՞նչ երազեր եմ, Թողութիւն ըրէք, տիկին, ինչ որ կը զուրցեմ մի միայն չըլ՝ մարտութիւնն է:

— Դուն երազեր ես, հասկըցա՛ր, ըսաւ Պէրքո: Մենք բան մը ուրիշ բանի տեղ ըսելու սովորութիւնը չունինք, ինչպէս կ'ընեն երեսի ջուր ըսուած բանը լուանցողներն, երկու գէմբով մարդիկ, որոց համար իր մը հաստատելն ու ժխտելն անտարբեր բան է:

— Տէր, պատասխանեց անուած կերպով շէլթրուա, լաւ՝ հասկընալով որ այն իսկ թող սլաքը գէպ իրեն ուղղեալ էր:

— Ալ քատ մէկն եմ, տիկին. թէ որ հարուստ լինէի՝ այս վայրկեան իմ և քու մէջ շատ մեծ տարբերութիւն պիտի գտնուէր:

— Կազայեմ, Պէրքո, լուս կեցիր: ըսաւ Վիկտորինէ:

— Ի՞նչ լուս կենալ, քիչ լուս. երբոր ըսիր որ ճորտգործ վրայդ տեղեկութիւն հարցընելու քնացեր ես, և թէ զքեզ չեն թողուցած որ իրեն տեսնալը մտնես, չըլ:

մարտութիւնը միայն ըսիր, իսկ եթէ այս տիկինս ուրանաւ կ'ուզէ զայդ՝ ունի իրեն յատուկ պատճառներն :

— Այ՛, մայր, պատասխանեց աղան միամտարար քնական կերպով, Վիկտորինէ եկաւ՝ ես զինքը տեսայ : Ճշմարիտ է :

— Ար լսէք, տիկին, ձեր որդին կը հաւաստէ :

— Աը չփոթի... պատասխանեց ձեւթրուտ խռովեալ կերպով, կատաղի աչք մը անկելով որգւոյն վրայ : — Իսկ վերջինս կամ իր անկրթութեան պատճառաւ ե կամ իւր քնական պակասամտութեան իբր հետեւանք, չհասկըցաւ որ ինքն իւր մօրը ամբասանող կը լինէր, և շարունակեց :

— Զէ, չէ, չեմ չփոթիր, ինքն էր որ եկաւ, ինքն էր. և այս անգամ պիտի չկարեւ : նաս ինծի սուտեր զլորտը կէտալու, ինչպէս որ ըսել աուիր այն օրը՝ երբ բարկաւ ցուցիր իւր մօրեղբայրը, համազելով որ Վիկտորինէ բնաւ եկած չէր տեղեկութիւն ուղեւս իրեն վրայդ :

— Լուս կեցիր, ապուշ, սաստեց մայրը : — Ըսածը չի գիտեր, ըսաւ գտնաւորով Պէրրոյի :

— Ա՛հ, ան, ահաւասիկ ստատանն որ աղօթք լսելէ կը փախի, ըսաւ ծիծաղելով նաւազարն : — Թէ որ ուրիշին փաս ընելու համար այս մտաղաշ հասակն կը սով րեցընես իրեն սուտեր զուրցելու, նայէ որ մեծնալէն վերջը կարենայ պիտոր ըսել որ զինքը առաքինութեան Ճշմարիտ գոհար մը գարձուցեր ես :

— Այ՛, Ճշմարիտ է, Ճշմարիտ կրկնեց աղան. ես ըսածս գիտեմ : Նայինք ուրեմն Ճշմարիտ չէ՞ նաև որ երբ մօրեղբայրը մեռնելէ առաջ զինքը տեսնել կ'ուզէր, դուռն ... Բայց ըսելէքը չկրցաւ լմնցընել. վասն զի ուժով ապասի մը մօրը ձեռքէն մեկն նած՝ բռտերը բերնին մեջ փակեց : Բայց աղան լալ սկսելով՝ ցուէն սկսաւ կրկնել .

— Ճշմարիտ է, այ՛, Ճշմարիտ է, գարշելի մայր, գարշելի մայր :

— Ո՛հ, ի՛նչպէս ալ իրաւցընէ մայր մը, ըսաւ Պէրրո ինքեիքնն :

ձեւթրուտ տեսնելով որ գործը ձախորդ ելք կ'ունենար, և թէ իրեն վիճակը շատ գոժուարին կէտի հասեր էր, գարձաւ դէպ 'ի գատարանին պայտանեայն, և ըսաւ .

— Տէր Աշապիտոս, զուրցեցիր այս մարդկանց որ ես եկած եմ առնը ժառանգութիւնն ստանալու համար :

— Այ՛, տիկին, ըսի :

— Ուրեմն շատ լաւ, լսեցիր Վիկտորինէ :

— Լսեցինք, տիկին, լսեցինք. խուլ չէինք որ երկրորդ անգամ մ'ալ զայն մեզի կրկնէր, ըսաւ Պէրրո :

— Տիկին, շուտ մը վրայ բերաւ Վիկտորինէ, վախնալով որ յանկարծ չլինի թէ Պէրրո անխոհեմ գործ մ'ընէր. ես պատրաստ եմ դուրս ելնելու, և այս բանս այն օրէն 'ի վեր գիտելի՛ երբ մօրեղբայրս այս ասան վայելքը ինծի շնորհեց. բայց շնորհեցէք ինձ գէթ քանի մ'որ, որ կարենամ ուրիշ քնակութիւն մը գտնել :

— Եւ սէ իսկ վայրկեան մ'աւելի քեզի ժամանակ կը արուի, բայց եթէ որչափ որ պետք է ունեցած բաներդ գուրս կրելու համար, այսօր պիտի գան որմնագիր. ներս այս օրմներն ազտեղութիւնէ մաքրելու :

— Ա՛հ, այս տեղ աղաւթութիւն կայ... մ՛հ, չեմ գիտեր ի՛նչպէս ինքզինքս բանել ապասի մը չըգրնելու համար այդ կնկան ըսաւ, նաւազարն :

— Ինձի՛ սպանալիք, ինձի՛, ըսաւ ձէլթրուս սուր և խայթող ձայնով մը: Յեւոյ պաշտօնէին գանձարով, աւելցուց.

— Տէր, օրէնքը յարգել տուր: — Դառնալով յետոյ Վիկտորինէի՛ շարունակեց.

— Եւ գուն այս վայրկենիս պետք է մեկնիս, հասկըցար:

— Բայց խնդրի՛մ... հիւանդ եմ... Այս հիւանդ վիճակիս մէջ փողոցի՛ վրայ մեռնի՛մ... Ա՛խ, տիկին, իրաւացնէ անգլուծիւն և ըրածդ...:

Ծեղիլին չկրցաւ շարունակել, որովհետեւ այս վերջին հարուածէն և ցաւէն ընկ. չէալ, սիսաւ սաստիկ գառնուծեամբ լալ:

— Մի՛ լար, մի՛ լար Վիկտորինէ, ըսաւ Պէրրօ, զգածեալ ազգականին արցունքէն. մինչդեռ իւր սիրտը գառն մտղձով մը կը կեղեքէր, որ կրնար զինքը անխոհեմ գործի մը ձեռք զարնել տալ. բայց ինքզինքը բռնեց՝ խեղճ Վիկտորինէի ցաւերը չաւելցընելու համար, և շարունակեց.

— Թո՛ղ ազատ այս տունս՝ այս անսիրտ կնկան, այս անզգամ արարածիս, որ քեզի ինկալիք ժառանգութենէ մը շքեզ շքեզ վերջը, հիմա նաև անէզ ալ գուրս կը վառնտ փողոցին մէջ, կարծես շնէն աւելի անարգ լինէիր. շարժելով սիրտը ոչ քու խեղճ վիճակիդ և ոչ քու հիւանդութեանդ վրայ: Եկուր ինձի հետ. իմ խղիկս երկուքուս համար ալ բաւական պիտի լինի, ես յատակին վրայ կը քնանամ, իսկ գուն իմ անկողնիս մէջ: Այն քէչ մը գրամը որ ժողովրդ էինք աղաք Դարմանոցէն հանելու նպատակաւ, կը ծախեմ ես ունեցած իրեղէններդ տեղափոխել տալու և պետք է զածը քնելու համար: Տղան այն աստի՛ կ'անենք՝ երբոր Աստուած ամենաբարին մեզի միջոց շնորհէ: Կ'երթամ հիմա շուտով երկու բեռնակիր կանչելու որ այս քանի մը իրեղէններդ կրեն: — Ինձի պէս ըրէ, խնտա, Վիկտորինէ, խնտա, և ըսէ այս անսիրտ, այս անգուժ կնկան որ « Աստուած շարժօրերը վարձք չի տար » և թէ ուշ կամ շուտ իրեն ըրած շարեաց փոխարենը պիտի վճարէ: — Լաւ միտքդ պահէ այս խոսքերն, շարունակեց Պէրրօ, դէպ 'ի ձէլթրուս գառնալով սպանալիք, որ երեսին գոյնը նետած և բողբոջին շփոթած՝ գլուխը խոնարհեցուց պատուաւոր նաւավորին կայծակ ցատկէցնող ալքերուն. լաւ միտքդ պահէ ըսածս, և աղմօք ըրէ Աստուծոյ որ շտայ քեզի լալ արեան արցունքներով, փոխարէն այն շարեաց որ այս խեղճ եղկելոյն հասուցիր:

Այս ըսաւ, և զգեստին աստառով թխագոյն այտերը թրնող արցունքի կաթիլ մը սրբելով, գահաձիթաբար վար վաղէց սանգուղներէն՝ նաւակ մը և երկու բեռնակիր փնտռելու համար, որք պիտի փոխադրէին իւր խեղճ հօրեղբորորդւոյն սակաւաթիւ իրերն:

Հաղիւ աներեկոյթ եղաւ նաւավարն, ձէլթրուս՝ գառնալով դէպ 'ի Վիկտորինէ, և անհաստատ ձայնով մը՝ զոր 'ի զուր կեղծել կ'ուզէր ամուր բռնելու, սովորականին հակառակ՝ քողջութեամբ ըսաւ.

— Նայէ, տիկին, չեմ ուզեր որ զիո շարասիրտ համարին. չեմ ուզեր հօրեղբոր, որդիդ զիս անսիրտ և անգուժ կնկան տեղ դնէ. ուստի քեզի կը շնորհեմ այտեղ գանուած կահկարասիքը, որոց գործածութեան իրաւունքը միայն, ինչպէս յայտնի է մօրեղբորդ կապկէն՝ քեզի շնորհուած եր մինչև նորա մահը: Դարձեալ, փոխադրութեանց համար ընկիք ծախքերդ ալ ես կը վճարեմ. և եթէ կարոտութեան մէջ պետք լինէ քեզի փոքրիկ օգնութիւն մը՝ ինձի եկուր համարձակ, և երբք քեզի օգնութիւն մը պիտի լըջացուի:

— Ինծի՞ ողորմութիւն մը... ինծի՞ — գոչեց Վիկտորինէ. այն իւր Թշուառութիւնը նախատող խօսքերէն վերաւորուած. — Ե՛ս քու տունդ գամ. ես մտաւոր քեզմէ ինչ որ իրաւամբ իմն է և գուն գողցար ինծմէ. ո՛հ, ոչ, ոչ երբեք. աւելի յանձն պիտի տանեմ մեռնիմ խեղճութեան մէջ, պիտի երթամ փողոցներու մէջ հացի մը կտոր մտաւալու, պիտի լմննցնեմ իմ Թշուառ օրերս հիւանդանոցի մը անկիւնը, բայց բնաւ քեզմէ ողորմութիւն պիտի չխնդրեմ: Այդպիսի սղորմութիւն մը ոչ Թէ իմ վշտացս դիւրութիւն պիտի պատճառէ, այլ մանաւանդ նախտինք իմ անձիս, և ամօթ իմ փափուկ զգացմանցս:

— Տիկին, գուն ինծի գոռոզութեամբ և նախատանօք պատասխան կու տաս, մինչդեռ ես քեզի բարեք մ'ընելու վրայ կը խօսէի:

Այս անամօթ պատասխանս, զոր յանդգնեցաւ տալ ձելլթրուտ Վիկտորինէի, որ իրաւացի կերպով ինքզինքը նախատուած կը համոզէր, իւր արժանաւոր պատասխանն ընդունեցաւ. այն եզկելւոյն լուութեամբն, որ միայն բաւական համարեցաւ ցուրտ և ընկճող հայեցուածք մ'արձակելու այն կնկան վրայ, որ եկած էր իւր սըրտին վշտերով սփոփուելու, և վերաւորելու զինքը նախատանօք և կատականօք:

Այս վայրկենիս վրայ հասաւ Պէրթօ զոյգ մը բեռնակիրներով, և գէմքովը զուարթ, բայց մահը ստոին մէջ կրելով, կատակի կերպով ըսաւ իւր հօրեղբորորդոյն.

— Ահաւասիկ, Վիկտորինէ, երկու մեռելակիրներն, որոնք եկած են քու Թշուառութեանդ հոտած գիտկները մեկգի տանելու. և հիմա պարկեշտ աղքատի մը տունն ըն՝ գարշելի արարածի մը փառասմբ պալատ պիտի դառնայ: — Տղաք, ըսաւ յետոյ բեռնակրաց, երբ որ կամենաք՝ կրնաք բեռնաւորել:

Բոլորովին բարբարոս, բոլորովին անխեղճ սիրտ մ'ալ պիտի զգածուէր տեսնելով խեղճ Վիկտորինէն, որ հիւանդագին և դժբախտութիւններէ հալածուեալ, կը բռնագատուէր յանկարծակի իւր խղիկէն ելնելու. և բայց աստի ծագու նիւթ եղած էր այնպիսի մեկէ մը՝ որ իւր ամբողջ ստացուածոց գողն էր: Բայց ձելլթրուտ՝ գժոխաժին ուրախութեան մը վայելից ծայրը հասած՝ անզգայ կեցեր էր, և չբնուէրներով ժպտելով կը զուարճանար իւր անգուծ յաղթանակին սոսկալի սեւտարանը գիտեւելով. մինչդեռ իւր եղկեղ զօհն, արցունքով ալքերը մթնցած և սիրտը լացով բեռնաւորած — վասն զի կը ջանար ինքզինքը բռնել լալէ՛ այն ամբարիշտ կնկան ուրախութիւնը շուտեցնելու համար — իրեւ ապշած կը գիտէր բեռնակրաց գործունէութիւնը, որոնք իրեն կահկարասիքը կը տանէին:

Բայց նախախնամութիւնն միշտ վշտացեալ և տառապանք կրող անձանց քով կը դնէ միտթարիչ հրեշտակ մը, որ բարերար ձեռքով օգնութեան կը հասնի Թշուառութենէ հարուածելոյն. և այս հրեշտակն, այս բարեգութ — արարածն շատ անգամ — իրեւ հակացոյց հայեղի ուրիշներու ազահութեան — կ'ընտրուի խեղճ մարդկանց գասէն, այն ռամկին գասէն՝ որ իրեն կոպտագոյն տարագին ներքեւ կը ծածկէ ամենավեհանձն և մարդասէր սիրտ մը: Այս է ասհաւասիկ, և ասիէ գուրջ շիայ ճշմարիտ ուրիշ պատկեր անշահասէր մարդասիրութեան, այն աւետարանական սիրոյն. որով աղքատն և Թշուառն իւր դժբախտ եղբոր հետ կը բաժնէ այն հացի կտորն, որ հագիւ Թէ իւր անօթութիւնը յագեցնելու կը բաւէ, և զոր իւր Խակաթին պատուաբեր քրտինքովը կը շահի:

Ինչպիսի՞ ասհաւոր գաս է այս այնպիսի՞ հարուստներու, որ մինչդեռ իրենք ոսկոյ մէջ կը լլզան, կը Թաղուն անօթութենէ մեռնելու անժառանգ մնացած աղքատ մը,

և կամ, եթէ նաև աննշան ողորմութեամբ մ'ալ զիրենք մահացընեն, հրատարակեն զայն օրագրաց մէջ, հարկանելով փողոս աստղի խշուակն :

Այս շքմարիտ մարդասերն, այս պահապան հրեշտակն, Վիկտորինէ իւր դժբախտութեան մէջ գտաւ իրեն հօրեղորորդին Պէրբօ, պատուաւոր և ազքատ նաւավար մը, որ յամօթ անդամ ձէլթրուտի, պահանջած էր իւր խեղճ ազգականէն յանձնառու լինել՝ բաժնելու մէջերին իւր ազքատին խոյկը, անոր ասլով իւր խըշտեակը, իսկ ինքը գետնի վրայ հանգչելու գոհ լինելով, իւր նաւակին ծակտակէն ծածկոցին մէջ փաթթուելով: Բայց ձէլթրուտ՝ շահատիրութենէն կուրցած, կուրցած նաև սատանայական ուրախութենէ մը՝ որով լեցուած էր իւր զըռուելի նպատակին հասած լինելով, հպարտացած հարուստ ժառանգութեամբ մը՝ զոր այնքան խարդախ հնարքներով կըցեր էր յափշտակել խեղճ Վիկտորինէի ձեռքէն, այն պարագաներուն մէջ այսպիսի բարոյական և մարդասեր մտածութիւններէ շատ հեռու կը գտնուէր. — Ինքն իւր նպատակին հասեր էր և ուրիշ բան չէր ուզեր :

« Ասկին ամէն բանի կարող է », կ'ըսէր աստիկն առածն. և ա՛նա ինքն սակ ունէր, արդարութեամբ կամ անիրաւութեամբ ձեռք բերուած՝ իրեն փոյժը չէր, և մարդիկ ոսկւոյն շողիւնը տեսնելով՝ կը գոցեն Երկու աչքերնին միանգամայն, և եթէ ունենան յին հասած լինելով, հպարտացած հարուստ ժառանգութեամբ մը՝ զոր այնքան խարդախ հնարքներով կըցեր էր յափշտակել խեղճ Վիկտորինէի ձեռքէն, այն պարագաներուն մէջ այսպիսի բարոյական և մարդասեր մտածութիւններէ շատ հեռու կը գտնուէր. — Ինքն իւր նպատակին հասեր էր և ուրիշ բան չէր ուզեր :

Քանի մը վայրկեանի մէջ Վիկտորինէի խեղճուկ կարասիքն անպաճոյճ փոքրիկ տեսնէն նաւակին մէջ փոխադրուէր էին, որք պիտի ուզողուէին նաւավարին խոյկը :

— Հիմա եթմանք մենք ալ, ըսաւ Պէրբօ Վիկտորինէի, այս խօսքերովս արժնոցընելով զինքը իր ցաւոց մէջ ընկնած տեսակ մը ազըութենէն : — Փոխադրութիւնն լընցաւ, հիմա քեզի ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ շնորհակալ լինեալ այս բարեսիրտ կնկան՝ քեզի համար ըրած ողորմութեանն համար :

Այս ըսելով ուսերուն վրայ ձգեց իւր վերնազգեստը, թե՛ր Վիկտորինէին տուաւ, և սկսաւ գէպ 'ի տանգուղն երթալ : Վիկտորինէ՛ երբ զինքը այն աստիճան մահացնող կնկան քովէն անցաւ, որ չըսուած անամօթութեամբ մը՝ կեցեր իւր յաղթանակին վայելքը կը կատարէր, զգաց որ արինը գլուխը զարկաւ, և լացէն ու բարկութենէն գողգոռուն ձայնով մ'ըսաւ իրեն .

— Այր մեկնի՛մ ես, տիկին : Գուն զիս յետին թշուառութեան մէջ ձգեցիր... մի նակ, աչքատ, հիւանդոտ, առանց բնակարանի մը, էրիկս պատերազմի մէջ կորսընցուցած, պիտի ստիպուէի քու պատճառաւ գողորմութիւն մուրալու հացի մը կտոր անթուութիւնս անցնելու համար, անկողնիկ մը՝ յոգնած անդամներս հանգչելընելու համար, եթէ չունենայի քովս այս աչքատ և պատուաւոր նաւավարն. որ յօժաբութեամբ սրտի կը շնորհէ ինձի իւր անկողինն և իւր օգնութիւնն... Բայց չէ, մի՛ կարծեր թէ Աստուած անպատու հաս պիտի թողուս այս քու դժօրինային գործք... վաս գործ մը պիտի լինէր... Ինքը պիտի պատժէ զքեզ. գողուց կնիկ, որ նախատանջ արձանար հեցիք ուրիշին գժբախտութիւնը, որ ոտքի տակ ասիրթ թշուառ ազքատ մը՝ յափշտակելով ժառանգութիւն մը որոյ իրաւունք ունէր : Եւ այն քու որդիք, այն պոռնչկորդիք, որոյ համար բռնադատեցիր զիս մուրալով կեանքս անցընելու, սի՛ գիտէ թէ Երկար ժամանակ պիտի չկարենայ ինձմէ գողցուած ժառանգութիւնը

վայելել, և ես տէր թաղով ըստ օրինաց ինձի ինկած հարստութեան, պիտի կարե- նամ վրէժս առած լինելքու անգլամ և անգութ գործողութիւնէդ :

Այս խօսքերս ըսելով Պէրբոյի ձեռքէն բռնած՝ արագութեամբ սանդուղէն վար իջաւ, վերջն առելութեան և արհամարհանաց հայեցուածք մ'արձակելով ձեւ- թորուտի վրայ, որ այնպիսի բուռն ցառոց իրաւացի կշտամբանաց փոխադարձ սկսաւ բերանարաց անհեթեթ ծիծաղել :

Տղան՝ արժանաւոր որդի այնպիսի մօր մը, հազեւ թէ երկու ազգականներն մեկ- նեցան, սկսաւ ցատկել ցատկըստել սենեկին մէջ, ըսելով .

— Մայրիկ, հիմա որ իրենց պատըռտած հնոսիներով գնացին կորսուեցան, մենք ալ տուն երթանք . քարոզք լմեցաւ :

Շարունակիլի

ՀՌՌՌՌ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԱՃՈՒՄՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵՒՐՈՊՈՅ

Արդի ժամանակաց ծանր և երկարատև հասարակաց յուզմանց մէջ, մարդիկ թողով զներկայն և զանցեալն՝ ապագային վրայ աւելի իրենց մտադրութիւնը կ'ուղղեն, մանաւանդ թէ կը ջանան նոցա միջոցով գուշակիւ զապագայն :

Այս է հաճախ մատենագրաց և վիճակագրաց շատերուն փոյթն, որոց աչաց առջև միշտ ներկայ է Եւրոպիայ մերձակայ ապագայն, որով կը սրեն իրենց միտքը նորանոր գուշակութեամբք գլխաւոր ազգաց և բովանդակ իսկ քաղաքականացեալ աշխարհիս ապագային վրայ :

Ընդհանրապէս իրենց խուզարկութիւնքն երեք կէտի մէջ կը բու վանդակուին . այն է, նկատմամբ ժողովրդեան, տնտեսագիտութեան և քաղաքականութեան . և 'ի սոյնս այժմեան դէպքերը հիմն զնեղով՝ գուշակութեանց անձայր ասպարիզին մէջ յառաջ կը նետուին : Բայց իրենց սխալն յայնմ է, որ բարոյական աշխարհս ալ ըստ աստեղաց աշխարհի՝ անփոփոխ օրինք վարեալ կը համարին, մինչդեռ մարդկային ազատութիւնն և աստուածային ամենակարող նախախնամութիւնն մեծ մասն կը գրաւեն 'ի միասին, ըստ առածին թէ՛ Մայրլի առաջադրէ, այլ Աստուծա՛մ տնօրիւնէ :

Առնունք 'ի ձեռս օրինակ իմն զազգահամարն և հարցնենք, ինչ պիտի լինի աշխարհս կամ գէթ Եւրոպա յետ յիսուն, հարիւր կամ աւելի ամաց, երբ իւր ներկայ ժողովուրդն կրկնապատիկ կամ եռապատիկ լինի :

Ստոյգ է որ ամէն անդ արդ անուամբ յայտնի է, ոչ ոք կրնայ երկբայել : Ըստ քաջակշիռ հաշուոց Լավասէօրի, աշխարհիս արդի բնակ-